նուկ, Զինով-Օհան գացին. հասան Կապուտկող[1]։

Գացին թագաւորի կուշտ ու ըսին.—Թագաւոր, մեր տղէն տուր տանինք, Դաւթին սպանեցին։

Թէ՝—Ո՞ր սպանեց։

—Զմլկեր սուլթանի ախչիկն, ըսեցին, սպանեց։

Թագաւորն ըսեց թէ՝—Տղայ չ'էղեր ա Դաւթին։

Ընդոնք ըսեցին թէ՝—Էղեր ա։

—Հա՛, ըսեց, էղեր ա, ըմա մեռեր ա։

Քեռի-Թորոսիկն ըսեց.—Օր մեռեր ա, մենք մեր ջնսի գերեզման կ'ճանչնանք. եօթ շէնք է երկէնք։

Ըսեց.—Քելէք, երթանք, տեսնանք։

Գացին, տեսան, օր երկու շէնք չէր էղնի։

Ու ըսեցին.—Թագաւոր, մեր տղէն դո՞ր ա, տուր տանինք, էդիկ մեր ջնսի գերեզման չէ։

Թագաւորն ըսեց թէ՝—Զ'կայ։

Քեռի-Թորոսիկն ըսեց.—Բոռա՛, Զինով-Ցովան։

Զինով-Ցովան բոռաց մէկ. օր բոռաց, ձէն գնաց, հասաւ Մհերին (Մհեր տարած էն եօթ դարգըհով ներս էն կոխած, դհոլ զուռնայ կ'զարկէն, օր Մհեր չ'լսէր էդոնց ձէն)։

Ըսեց.—Զինով-Ցովան, մէկ լէ բոռա՛։

Ձէն էկաւ, Մհերի անկաչ ընկաւ։

Դհոլ, զուռնէն դհա զըլեցին։

Դհոլչուն, զուռնաչուն ըսեց.—Ընդոնց ձէն կտրէք, իդա իմ ջնսի ձէն էր՝ էկաւ։

Դհոլչին, զուռնաչին դհա զիլ զարկեցին դհոլ ու զուռնէն։

Հոլնդեց Մհեր ու տուեց զըմէն մէկդէն ու գնաց դուս։

Գնաց, հասաւ ուր հրօխպէրներու կուշտ. օր գնաց, հասաւ

---

[1]) Ա. վարիանտով Կապուտկող գնացողներն են. Քեռի-Թորոս, Զինով-Ցովան, ճնճղիկ-Փոքրիկ, Ցուան-Վէգոն, Ճոռ-Վիրապ, Խոր-Վիրապ և Խոզ-Բաղին։ Խոզբաղնի այստեղ հանդէս գալը Սասունցիների հետ՝ մենք պատմողի յիշողութեան սխալ ենք համարում, թէև երկու անգամ կրկնուում է նոյն անունը։